*
* *

Ամբողջ գիշերներ ամպերը ծածկած անհուն բար-
ձունքներ՝
Մայր-երկրի վերայ թափեցին առատ պղտոր ար-
ցունքներ.
Եւ ուշ դընելով անդուլ անձրևի տաղտուկ ցաւ-
երգին՝
Անտերև՝, դժգոյն լացին ուռիներ առուի եզերքին։
Ամբողջ գիշերներ ես էլ տխրեցի անձրևի երգից.
Արիւն էր ծորում սիրտս գալարող խորամուխ
վերքից.
Ո՞, ես տենչացի բերկրանք ու յոյսեր, և՛ խանդ, և՛
գորով,
Բայց նրանք, աւաղ, ծածկուած են աշնան մրռայլ
ամպերով։
Ամբողջ գիշերներ նոր կեանք երազեց իմ անյագ
հոգին...
Ա՜խ, ինչու, բախտ իմ, աշնան վիշտ տրուիր կեան-
քիս գարունքին։

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ